



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստան համահայկական հիմնադրամ
Հասարակութեան հետ կապերու բաժին
Հեռ: + (374 10) 521505

pr@himmadram.org

www.himmadram.org

Մամուլի հաղորդագրություն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը Հայաստանի և Արցախի տարբեր կառույցներու նուիրած է համակարգիչներ

Երևան, մայիս 06, 2009թ.: ԱՄՆ-ուն մէջ գործող «Մալաթիա» կրթական միութիւնը, տնօրէն Ժորժ Ասատուրեան, կը հովանաւորէ Հիմնադրամի Հայաստանի և Արցախի մէջ իրականացուող համակարգիչներու նուիրատուութեան ծրագիրը: Ծրագրի նախատեսած շրջանակներէն ներս 120 համակարգիչ արդէն բաշխուած է տարբեր հաստատութիւններու, ինչպէս Երևանի և Արցախի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն, Երևանի ճարտարապետութեան և շինարարութեան համալսարանին, ինչպէս նաեւ շարք մը գիւղական համայնքներու, դպրոցներու և հասարակական կազմակերպութիւններու:

Նախագիծի իրագործման սահմաններուն մէջ Հիմնադրամը առաջնայնութիւնը տուած է «Գիւղերու զարգացման ծրագրին», հետեւաբար նուիրատուութեան մեծ մասը ուղղուած է Տաւուշի համայնքներու գիւղապետարաններուն (Ապագա, Զորաթան, Զինարի, Այգեձոր, Տաւուշ, Լուսահովիտ, Նորաշէն) և դպրոցներուն (Սիսիանի Խաչատուրեանի անուան արուեստի դպրոց, Ներքին կարմիրի դպրոց, Գիւմրիի «Տիրամայր Հայաստան Պօղոսեան կրթական համալիր» ուսումնական կեդրոն): Համակարգիչներ ստացած են նաեւ «Փիլատելփիա», «Յոյս կեանք», «Աստղավարդ» հասարակական կազմակերպութիւնները և ՄԱԿ-եան ՄԻԱՎ/ՁԻԱԶ-ի միացեալ ծրագրի շրջանակներով նախատեսուած Լոռիի և Շիրակի մարզերուն մէջ հիմնադրուած համայնքային տեղեկատուական կեդրոնները:

«Յոյս ունիմ որ Հիմնադրամի և «Մալաթիա» կրթական միութեան միասնական գործունէութիւնը այս համագործակցութեամբ չի սահմանափակուիր և կը դառնայ շարունակական, որովհետեւ ունինք միասնական նպատակ և ձգտում՝ ապահովել երկրի առաջընթացը»,- ըսաւ «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնատար Արա Վարդանեանը:

Բարերար Ժորժ Ասատուրեանը մեծ ուրախութիւն և պատիւ համարեց այն իրողութիւնը, որ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ճիւղին և Արցախի պետական համալսարանին մէջ բացուող համակարգչային լսարանները պիտի կրեն իր անունը: Բարերարի կարծիքով Հիմնադրամի հետ աշխատանքը արդիւնաւետ ու նպատակային էր և յոյս յայտնեց, որ ծրագիրը կը դառնայ շարունակական:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունէութիւնը և տարբեր հաստատութիւններու և կառույցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան և ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 16 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ: